ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 27 » « նոյեմբերի » 2024թ.**

ժամը 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Ռ.Հակոբջանյան

Հ.Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Զոհրաբյան

Բացակայում է՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Սինանյան

1. Հանձնաժողովի անդամի բացակայության և նիստը նախագահող ընտրելու մասին

1.1. Հանձնաժողովի նախագահ Լ.Սինանյանը նիստին ներկա չէ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 26-րդ կետի 1-ին ենթակետը նիստը նախագահում է հանձնաժողովի անդամ Ռ.Հակոբջանյանը:

2. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/26» ծածկագրով մրցույթի հայտերի գնահատման նպատակով նիստի անցկացման վայրը, օրը և ժամը

2.1. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/26» ծածկագրով մրցույթի հայտերի գնահատման նպատակով նիստը կայացել է 2024 թվականի նոյեմբերի 27-ին, ժամը 14:00-ին, հասցեն՝ շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարական տուն 3, 5-րդ հարկ 529 սենյակ հասցեում:

3. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի մասին

3.1. Չափաբաժիններ 11, 17-ով առաջին տեղ զբաղեցրած «Ռուբշին Կապիտալ» ՍՊԸ-ի ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերը համապատասխանում է հրավերի պահանջներին,

3.2. Չափաբաժիններ 1, 2, 4, 5, 13, 16, 20-ով առաջին տեղ զբաղեցրած «Արվադա գրուպ» ՍՊԸ-ի ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերը համապատասխանում է հրավերի պահանջներին,

3.3. Չափաբաժին 12-ով առաջին տեղ զբաղեցրած «Մաքս Շին» ՍՊԸ-ի ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին,

3.4. Չափաբաժին 15-ով առաջին տեղ զբաղեցրած «Բարսիս» ՍՊԸ-ի ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին,

3.5. Չափաբաժին 14-ով առաջին տեղ զբաղեցրած «Բարսիս» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա է անհամապատասխանություն՝ ներկայացված տեխնիկական բնութագրում «Կերամիկական կամ կերամոգրանիտե սալիկներ նախատեսված սանհանգույցների պատերի հարդարման համար, սալիկի հաստությունը 9-11 մմ, արտաքին շերտը ողորկափայլ, հարվածակայուն: Գույնի, չափսերի (30x60 կամ 60x60 կամ 15x90 կամ 40x40) և ձևի համաձայնեցումը պատվիրատուի հետ: Մատակարարումը պատվիրատուի հասցեով, աշխատանքային օրերին 9:00-12:00 կամ 14:00-17:00, մինչև պատվիրատուի պահեստ» մասը վերաբերվում է 15-րդ չափաբաժնին և պետք է հանել:

3.6. Չափաբաժին 3-ով առաջին տեղ զբաղեցրած «Ասմիդա» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա է անհամապատասխանություն՝ ներկայացված տեխնիկական բնութագրում «Մատակարարումը պատվիրատուի հասցեով, աշխատանքային օրերին 9:00-12:00 կամ 14:00-17:00, մինչև պատվիրատուի պահեստ» պահանջը չի ներկայացվել:

3.7. Չափաբաժիններ 6, 18, 19-ով առաջին տեղ զբաղեցրած «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին,

3.8. Չափաբաժիններ 7, 8, 9, 10-ով առաջին տեղ զբաղեցրած «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերում առկա են անհամապատասխանություն՝ ներկայացված տեխնիկական բնութագրերում ենթակա են հստակեցման «ոչ պակաս» և «առնվազն» բնութագրիչները:

4. Տեղեկություն «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/26» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու պահանջներին բավարարելու մասին

4.1. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների և դրանց փոխկապակցված անձանց ցուցակները և արձանագրել է, որ մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցները վերոնշյալ ցուցակներում ընդգրկված չեն:

5. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

5.1. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/26» ծածկագրով մրցույթի մասնակիցների ներկայացված գնային առաջարկի արդյունքում մասնակիցների զբաղեցրած տեղերը ըստ արձանագրություն 2-ի Աղյուսակի:

5.2. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/26» ծածկագրով մրցույթի մասնակիցների մերժված գնային առաջարկների մասին ըստ արձանագրություն 2-ի Աղյուսակի: Ներկայացված գնային առաջարկները մերժվել են համակարգի կողմից, քանի որ հակադարձ աճուրդում տեղի է ունեցել նախահաշվային գնի գերազանցում:

6. Հանձնաժողովը որոշեց՝

(Ռ.Հակոբջանյան)

6.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետը և Հրավերի 1-ին մասի 8.11 կետը՝ չափաբաժին 14-ով «Բարսիս» ՍՊԸ-ի, չափաբաժին 3-ով «Ասմիդա» ՍՊԸ-ի, չափաբաժիններ 7, 8, 9, 10-ով «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի անհամապատասխանությունները շտկելու նպատակով, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը:

6.2. Հանձնաժողովի քարտուղարին՝ էլեկտրոնային եղանակով և համակարգի միջոցով տեղեկացնել «Մայ «Բարսիս» ՍՊ, «Ասմիդա» ՍՊ, «Մեծ Ծիածան» ՍՊ ընկերություններին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը և համակարգի միջոցով, մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը շտկված:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

(Ռ.Հակոբջանյան)

7.1. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/26» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստ հրավիրել 2024 թվականի նոյեմբերի 29-ին, ժամը 16:00-ին, հասցեն՝ շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարական տուն 3, 5-րդ հարկ 529 սենյակ հասցեում:

8. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ռ.Հակոբջանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ.Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ.Զոհրաբյան